ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 19.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/35

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ի կողմից 02.03.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/35 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած 02.03.2018թ. բողոքով հայտնել է, որ Շնողի համայնքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) Շնող համայնքի 3-րդ փողոցի փոսային նորոգման և վերականգնման աշխատանքների ձեռքբերման նպատակով 12.02.2018թ. հայտարարել է «ԼՄՇՀ-ԳՀԱՇՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել երեք կազմակերպություններ, որոնց թվում են՝ «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ն և «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.02.2018թ. թիվ 2 արձանագրությամբ, հիմք ընդունելով մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները, մասնակիցների զբաղեցրած տեղերը բախշվել է հետևյալ կերպ. առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ն, իսկ երրորդ տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրությամբ սահմանվել է, որ անհրաժեշտ է էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին, առաջարկելով սահմանված կարգով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

«Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի կողմից վճարման պահանջագիրը լրացվել է սխալ, թույլ է տրվել կոպիտ սխալ: Մասնավորապես՝ «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ն վճարման պահանջագրում սույն հրավերով սահմանված կարգով հայտի կատարման ապահովում նշելու (ներկայացնելու) փոխարեն նշել է պայմանագրի կատարման ապահովում:

Մասնավորապես վճարման պահանջագրի սկզբի հատվածում և 14-րդ կետում (գործարքի վճարման նպատակը) «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ն նշել է պայմանագրի կատարման ապահովում:

Շնողի համայնքապետարանը հրապարակել է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:

Բողոքաբերը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 32-րդ հոդվածի 1-ին մասը, 34-րդ հոդվածի 1-ին մասը և 2-րդ մասի 1-ին կետը, «ԼՄՇՀ-ԳՀԱՇՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.1 ենթակետը:

Ընկերությունը գտնում է, որ «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ն վճարման պահանջագրով ներկայացրել է ոչ թե հրավերով սահմանված կարգով հայտի ապահովում, այլ պայմանագրի ապահովում: Մինչդեռ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով և հրավերի 7-րդ կետի 7.1 ենթակետով հստակ նշված է, որ մասնակիցը հրավերով սահմանված կարգով պետք է ներկայացնի հայտի ապահովում, այլ ոչ թե պայմանագրի ապահովում:

«ԼՄՇՀ-ԳՀԱՇՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.02.2018թ. թիվ 2 արձանագրությամբ առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելով «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ին հաշվի չի առել այն հանգամանքը, որ «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերով նախատեսված պայմաններին, մասնավորապես՝ վճարման պահանջագրով ներկայացվել է ոչ թե հայտի ապահովում, այլ պայմանագրի ապահովում: Հետևաբար սույն դեպքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն իրավունք չուներ «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի հայտը ճանաչելու հրավերի պահանջներին համապատասխանող: Հանձնաժողովը հայտը պետք է գնահատեր հայտն անբավարար և մերժեր այն:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Ընկերությունը բողոքով Խորհրդին խնդրել է՝

1. Փոփոխել «ԼՄՇՀ-ԳՀԱՇՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի բացման արդյունքում 21.02.2018թ. թիվ 2 արձանագրությամբ կայացված «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի հայտը հրավերի պահանջներին համապատասխանող ճանաչելու և «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ին որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը, «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի հայտը ճանաչել հրավերի պահանջներին չհամապատասխանող:

2. Արգելել (կասեցնել) «ԼՄՇՀ-ԳՀԱՇՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որևէ գործողության իրականացումը, այդ թվում՝ նաև պայմանագրի կնքման գործընթացը:

Բողոքաբերը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 06.03.2018թ. ժամը 11:15-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցություն, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. Շնողի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Շնողի համայնքապետարանը Խորհրդին ուղղված 05.03.2018թ. թիվ 108 գրությամբ հայտնել է, որ ՀՀ Լոռու մարզի Շնողի համայնքապետարանի կողմից կազմակերպված «ԼՄՇՀ-ԳՀԱՇՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտում հայտի ապահովումը ներկայացվել է գնման ընթացակարգի հրավերով սահմանված հավելված 9-ով (ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ (հայտի ապահովում), որին կցված վճարման պահանջագրում Գործարքի (վճարման) նպատակը դաշտը մեխանիկական սխալի պատճառով լրացված է պայմանագրի կատարման ապահովում: Հայտի ապահովման և պայմանագրի ապահովման վճարման պահանջագրերը նույնն են, իրարից ոչնչով չեն տարբերվում՝ բացառությամբ գործարքի նպատակը և մասնակիցը հայտի ապահովման չափը լրացրել է ճիշտ՝ առաջարկված գնի հինգ տոկոսի չափով և Պատվիրատուն գտնում է, որ մասնակցից հայտի ապահովման գանձման դեպքում գործարքի նպատակի պատճառով բանկում որևէ խնդիր չի կարող առաջանալ: Այդ իսկ պատճառով, գնահատող հանձնաժողովն այդ որևէ դեր չխաղացող վրիպակի պատճառով նպատակահարմար չի գտել մերժելու մասնակցի հայտը, մանավանդ, որ առաջարկված գների տարբերության չափը մեծ նշանակություն ունի համայնքային բյուջեի համար: Հետաքրքրական է նաև այն հանգամանքը, որ բողոք է ներկայացրել ոչ թե 2-րդ տեղը զբաղեցրած մասնակիցը, այլ 3-րդ տեղը զբաղեցրած մասնակիցը, որն անհամեմատ բարձր գին է առաջարկել:

Շնողի համայնքապետարանը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 06.03.2018թ. ժամը 11:15-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/35 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/35 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Լոռու մարզի Շնողի համայնքապետարանի կողմից Շնողի համայնքապետարանի կարիքների համար Շնող համայնքի 3-րդ փողոցի փոսային նորոգման և վերականգնման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԼՄՇՀ-ԳՀԱՇՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ն:

2. «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ն հայտի թիվ 9 հավելվածով որպես հայտի ապահովում ներկայացրել է տուժանքի մասին համաձայնագիր, որին կից ներկայացված վճարման պահանջագրի վերևի հատվածում, ինչպես նաև «14. Գործարքի/վճարման/ նպատակը» դաշտում նշված է պայմանագրի ապահովում:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.02.2018թ. ժամը 12:30-ի նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետով «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի հայտը գնահատվել է Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան, իսկ նույն արձանագրության 5-րդ կետով կայացված որոշմամբ «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ի 02.03.2018թ. բողոքը, Շնողի համայնքապետարանի 05.03.2018թ. թիվ 108 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է

միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ Լոռու մարզի Շնողի համայնքապետարանի կողմից Շնողի համայնքապետարանի կարիքների համար Շնող համայնքի 3-րդ փողոցի փոսային նորոգման և վերականգնման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԼՄՇՀ-ԳՀԱՇՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հրավերի թիվ 9 հավելվածով նախատեսվել է մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագրի հետևյալ օրինակելի ձևը՝

1.	ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[1] N **(մասնակցության հայտի ապահովում)**
2.	Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.
3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝	
4. Վճարողի բանկը՝	
5. Վճարողի հաշվի համարը՝	
6. Վճարողի ՀՎՀՀ՝	
7. Վճարողի ՀԾՀ՝	
8. Շահառու՝ Շնողի համայնքապետարան	
9. Շահառուի ՀՎՀՀ՝ 06600905	
10.Շահառուի բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	
11.Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 900262000285	
12. Գումարը թվերով և բառերով՝	
13. Արժույթը (բառերով և կոդով)՝	
14. Գործարքի /վճարման/ նպատակը՝ **Մասնակցության հայտի ապահովում**	
15.Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ <<ԼՄՇՀ-ԳՀԱՇՁԲ-18/02>>	
16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը	17. կից՝ _____ էջ
19.ա. Շահառուի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 19.բ. Կ.Տ.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 18.բ. Կ.Տ.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.Տ. "___" ___ 20___ թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____/ /ստորագրություն/ 21.բ. Կ.Տ. 22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ն հայտի թիվ 9 հավելվածով ներկայացրել է հայտի ապահովում՝ միակողմանի հաստատած տուժանքի մասին համաձայնագրի տեսքով:

Նշված համաձայնագրի 1.2 կետի համաձայն՝ ***որպես մասնակցության հայտի ապահովում,*** Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնությունը և ***կից վճարման պահանջագիրը՝*** լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների»:

Տուժանքի մասին համաձայնագրի 1.3 կետի համաձայն՝ Ընկերության կողմից գնման ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունները («Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մաս) չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն ***սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը*** (այսուհետ՝ ***մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիր***) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

Միևնույն ժամանակ «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի կողմից հայտի թիվ 9 հավելվածով հայտի ապահովման տուժանքի մասին համաձայնագրին կից ներկայացվել է ***վճարման պահանջագիր, որի վերևի հատվածում, ինչպես նաև «14. Գործարքի/վճարման/ նպատակը» դաշտում նշվել է պայմանագրի ապահովում:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.02.2018թ. ժամը 12:30-ի նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետով «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի հայտը գնահատվել է Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան, իսկ նույն արձանագրության 5-րդ կետով կայացված որոշմամբ «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ***մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում,*** որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին:

Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Շնողի համայնքապետարանի կողմից կազմակերպված «ԼՄՇՀ-ԳՀԱՇՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ***հայտի ապահովում,*** որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

Հրավերի 9-րդ հավելվածով նախատեսվել է հայտի ապահովման տուժանքի մասին համաձայնագրի և դրան ***կից ներկայացվող հայտի ապահովման վճարման պահանջագրի օրինակելի ձևը, որի «14. Գործարքի/վճարման/ նպատակը» դաշտը Ընթացակարգի հրավերի «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի» 14-րդ կետի համաձայն, նախապես լրացված է եղել շահառուի՝ Պատվիրատուի կողմից:***

Խորհուրդն արձանագրում է, որ «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի կողմից հայտի ապահովման տուժանքի մասին համաձայնագրին կից ներկայացվել է վճարման պահանջագիր, որի վրա նշված է ***պայմանագրի կատարման ապահովում***, մինչդեռ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությամբ, Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.1 ենթակետով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ***հայտի ապահովում:*** Տվյալ դեպքում հրավերով պահանջվել է, որ հայտի ապահովումը պետք է ներկայացվի միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

Խորհուրդն արձանագրում է, որ «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի կողմից որպես հայտի ապահովում ներկայացված վճարման պահանջագիրը չի բխում հայտի թիվ 9 հավելվածով ներկայացված տուժանքի մասին համաձայնագրի էությունից, քանի որ վերջինս ներկայացվել է որպես հայտի ապահովման տուժանքի մասին համաձայնագիր, որի մեջ նշվել է, որ կից ներկայացվում է մասնակցության հայտի ապահովման վճարման

պահանջագիր, մինչդեռ կից ներկայացված վճարման պահանջագրի վրա նշված պայմանագրի կատարման ապահովում: Հետևաբար Խորհուրդը գտնում է, որ «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի հայտով ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8-րդ կետի 8.2 ենթակետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքն հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 02.03.2018թ. ներկայացված բողոքը բավարարել՝

փոփոխել Շնողի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված «ԼՄՇՀ-ԳՀԱՇՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.02.2018թ. թիվ 2 արձանագրությամբ կայացված՝ «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի հայտը հրավերի պահանջներին համապատասխան գնահատելու և «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը և «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի հայտը գնահատել հրավերի պահանջներին չհամապատասխանող:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**